## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1937 Հոկտեմբեր–Նոյեմբեր Թիւ 10-11

էջ

Խմբ. — Հանգիստ հոգւոյ Ամեն. և Գեր. երջ. Հոգեւոր Տէր Աւետիս Պետրոս ԺԴ. Արփիարեանի, կաթողիկոս – Պատրիարք Տանն Կիլիկիոյ . . . . . 225

Բանասիրական

Կ. Քիափփինի. — Լիվոռնոյի Առաջին տպագրիչը Հայ քահանայ մըն էր. (Թրգ. և ծանօթագր. Հ. Ե. Փ.) . . . 229

Յ. Քիւրտեան. — Փայտափորագրչական մանրանկարչութիւնը և մանրանկարիչներ Հայ Տպագրութեան մէջ . . . . 239

Գրական

Արսէն Երկաթ. — Ս. Նշանի վանքը (քերթ.) . . . . . . . 249

Հ. Վահան Յովհաննէսեան. — Խոնարհութիւն (քերթ.) . . . . . . 249

Ֆերապ. — Այս ճամբան - Զգջայի . 250

Հ. Միքայէլ Յովհաննէսեան. — Մխիթարայ կիսանդրիին . . . . . 251

Գուրգէն Մահարի. — Երգիծական (Երեւանի պօէտ նէրկարարը) . . . 252

Փօլ Պուրժէ. — Կեանքի վրէժը (Թրգմ. Կ. Կոթողեան) . . . . . 252

Օրուան գրքեր–Գրախօսական

Հ. Կարապետ Ամատունի. — «Le Mariage en Droit Canonique Oriental» (Jean Dauvillierի) . . . . . . 269

Հ. Կ. Ք. — «Հայ Տոհմանուններ» . 273

Հոկեն. — «Ընտանեկան Դաստիարակութիւնը մեր տուներէն ներս» (Արտաւազդ Արքեպս. Ս.ի) . . . . . 274

Հ. Միքայէլ Յովհաննէսեան. — «Յովհաննէս Թումանեան» (Վ. Ահարոնեանի). 275

Հ. Վ. Հ. — «Խրիմեան գիւղատնտեսական մատենաշար» . . . . . 276

Գիտական

Հ. Գէորգ Ոսկեան. — Կ. Մարքոնի . 258

Գեղարուեստական

Վ. Շահպազ. — Հանճարն ու իր բիծերը. 277

Կենսագրական

Խմբ. — Յիսնամեայ Յոբելեան Քահանայութեան Հ. Թադէոս Վ.ի Թոմաճեան . 280

Թուղթ Ամեն. Աւետիս Պետրոս ԺԴ. Կաթողիկոսի առ Հ. Թ. Վ. Թոմաճեան (առթիւ Յոբելեանին) . . . . . 287

## SOMMAIRE

1937 Octobre-Novembre N. 10-11

p.

*Réd.* — † Sa Béatitude Avédis Pierre XIV Arpiarian, Patriarche de Cilicie . 225

**Philologie**

*G. Chiappini.* — Le premier éditeur de Livourne a été un prêtre Arménien (en 1643), (trad. par P. E. P.). . . 229

*H. Kurdian.* — L'Art xylographique et les miniaturistes dans les éditions arméniennes . . . . . . 239

**Littérature**

*Arsène Yergath.* — Le Couvent de St. Nichan (poésie). . . . . 249

*P. V. Hovhannessian.* — L'humilité. 249

*Férab.* — Le chemin - Désir d'oubli 250

*P. M. Hovhannessian.* — A Mekhithar. 251

*Kourken Mahari.* — Humoristique (Le peintre poète d'Erivan) . . 252

*P. Bourget.* — «La Vengeance de la vie» (trad. en arm. par K. Gothol) . 252

**Recensions**

*P. Garabed Amadouni.* — «Le Mariage en Droit Canonique Oriental» (par Jean Dauvillier) . . . . . 269

*P. C. K.* — «Noms des familles arméniennes» . . . . . . 273

*Hoken.* — «L'éducation familiale chez nous» (par Mgr. Ardavast) . . . 274

*P. M. Hovhannessian.* — «Jean Toumanian» (par V. Aharonian) . . . 275

*P. V. H.* — «Manuels d'Agronomie» (Khrimian) . . . . . . 276

**Science**

*P. G. Oskian.* — G. Marconi . . 258

**Beaux-Arts**

*Vahan Chahbaz.* — Le Génie et ses taches . . . . . . 277

**Biographie**

*Réd.* — Jubilé Sacerdotal du R. P. Thaddée Tomadjian . . . . 280

Lettre de S. B. Avédis Arpiarian Patriarche de Cilicie au R. P. Th. Tomadjian . . . . . . . 287

1843-1937

# ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ – ԳԻՏԱԿԱՆ – ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ-ՆՈՅԵՄԲԵՐ ԹԻՒ 10-11

ՀԱՏ. ՂԵ ՌՅՁԶ-ՌՅՁԷ

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

## ՀԱՆԳԻՍՏ ՀՈԳԻՈՅ

## ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ԵՒ ԳԵՐԵՐՋԱՆԻԿ ՀՈԳԵՒՈՐ ՏԷՐ ՏԷՐ ԱՒԵՏԻՍ ՊԵՏՐՈՍ ԺԴ. ԱՐՓԻԱՐԵԱՆԻ

### ԿԱԹՈՂԻԿՈՍ - ՊԱՏՐԻԱՐՔ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՄԱՀԱԳՈՒՇԱԿ տերեւաթափն էր աշնան... երբ հեռաւոր կղզեակս ալ հասաւ գոյժը մահուան սիրելի և սիրեցեալ Հայրապետին, որ Հոկտեմբեր 26ին պէյրութի մէջ կնքած իր մահկանացուն՝ թռած էր երկինք արդարներու հայրենիքը, ութսունեւերկու տարիներու պանդխտութենէ վերջ։

Ցեղակարծ բօթը լսելու պահուն կքումի խոր զգացում մը, և անդարձ բաժանումի ցաւ մը մեր սրտերը սեղմեց. ու սիրոյ և կարօտի վառ տենչ մը մեր դիմաց բերաւ անոր պատկերը. վերջին անգամ մ'ալ կարծես մեր աչքին առջեւ ծառացաւ նա իր հսաակովը պարթեւ, իր բարի և անոյշ հայեացքով, իր ժպիտովն հայրական, իր ամբողջ գորովովն ու բարութեամբ՝ որ այնքան յստակօրէն կը ճառագայթէր իր անձնաւորութենէն և գիտէր հմայել ու սիրցնել ամէն սիրտ որ բախտը կ'ունենար զինքը ճանչնալու։

Արփիարեան կաթողիկոս ոչ եւս է։

Ի զուր պիտի փնտռեն զինքը շատեր ու շատեր որ վայելած էին իր բարութիւնն և բարերարութիւնները։

Իր հոգեկան անայլայլ ու անդորր խորութեան մէջ ան շատ վիշտ ունէր թաղած. տառապանքները աքսորի, հուրի և սուրի. ցաւն ու արցունքը և մահը իր հօտին։ Որքան ալ արի ու բարի, սակայն հողեղէն մարմինը շատ կրած ու պարտասած էր, ու հիւանդութեանց հարուածին տակ մայր հողի գիրկը կ'իջնէր հանգչելու խաղաղ՝ երիթամած չրթներուն վրայ դեռ թրթռուն



digitised by A.R.A.R.@